ՀՀ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՂ ՃՅՈՒՂԵՐԻ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ԲԱԶՄԱՇԱՀԱՌՈՒ ԽՄԲԻ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 12

16.04.2019թ. | ժամը 14:00-16:00 | ՀՀ կառավարության նիստերի դահլիճ

Մասնակիցներ՝ Բազմաշահառու խմբի անդամներ

Նախագահող՝	Տիգրան Ավինյան	Փոխվարչապետ
	Իրինա Ղափլանյան	Բնապահպանության նախարարի առաջին տեղակալ
	Կարեն Իսախանյան	Տարածքային կառավարման և զարգացման նախարարի տեղակալ
	Արման Պողոսյան	Ֆինանսների նախարարի տեղակալ (այլընտրանքային անդամ)
	Պերճ Խաչատրյան	Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի իրավաբանական դեպարտամենտի ղեկավար
	Վահե Վարդանյան	«Գեոմայնինգ» ՍՊԸ-ի գլխավոր տնօրեն
	Սոնա Այվազյան	«Թրանսփարենսի Ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կենտրոնի գործադիր տնօրեն
	Ինգա Զարաֆյան	«Էկոլուր» տեղեկատվական հասարակական կազմակերպության նախագահ
	Արթուր Համբարձումյան	«Հասարակական ձայն» («Սիվիլ Վոյս») հասարակական կազմակերպության խորհրդի անդամ
	Արամ Օսիկյան	«ԱՍՍԱԹ» ՍՊԸ-ի գլխավոր տնօրեն (այլընտրանքային անդամ)
	Մանվել Եղիազարյան	«Մեղրաձոր գոլդ» ՍՊԸ-ի գլխավոր հաշվապահ (այլընտրանքային անդամ)
	Անդրանիկ Աղաբալյան	«Գեոէկոնոմիկա» ՓԲԸ-ի գլխավոր տնօրենի տեղակալ (այլընտրանքային անդամ)

ՀՀ ԱՃԹՆ-ի քարտուղարություն

Լուսինե Թովմասյան	քարտուղարության ղեկավարի պաշտոնակատար
Անահիտ Առուստամյան	քարտուղարության փորձագետ
Սաթենիկ Հովհաննիսյան	հասարակայնության հետ կապերի փորձագետ

Հյուրեր՝

Լիլիա Շուշանյան	Տարածքային կառավարման և զարգացման նախարարի տեղակալ
Արթուր Մանուկյան	Պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ
Վիկտորյա Այդինյան	Փոխվարչապետի օգնական
Շուշանիկ Քերոբյան	Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն
Նարինե Թադևոսյան	Համաշխարհային բանկի գրասենյակ Հայաստանում
Ալեքսանդր Դրագոյլովիչ	Գերմանիային միջազգային համագործակցության ընկերություն
Վիկտորյա Գևորգյան	Գերմանիային միջազգային համագործակցության ընկերություն
Լուսինե Սարգսյան	Երևանում բրիտանական դեսպանատուն
Վարանդ Մկրտիչեան	«Հանքարդյունաբերության օրենսդրության բարեփոխման նախաձեռնություն» ՀԿ

ԲՇԽ-ի բացակա անդամներ՝

Դավիթ Անանյան	Պետական եկամուտների կոմիտեի նախագահ
Վարդան Գևորգյան	Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ
Արթուր Նիկողոսյան	«Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի ադմինիստրատիվ տնօրեն
Արմեն Ստեփանյան	«Լիդիան Արմենիա» ՓԲԸ-ի կայուն զարգացման գծով փոխնախագահ
Հարություն Մովսիսյան	Երևանի պետական համալսարանի օգտակար հանածոների հանքավայրերի որոնման և հետախուզման ամբիոնի դոցենտ
Դավիթ Թադևոսյան	«Թեղուտ» ՓԲԸ-ի գլխավոր տնօրենի տեղակալ (այլընտրանքային անդամ)

Արձանագրող՝ Լուսինե Թովմասյան

Անահիտ Առուստամյան

ՕՐԱԿԱՐԳ

1. ՀՀ ԱՃԹՆ-ի բազմաշահառու խմբի (ԲՇԽ-ի) նիստի բացում

Տ.Ավինյանը, որպես ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի նախագահի պաշտոնակատար, ողջունեց նիստի մասնակիցներին և նշեց, որ 2018 թվականին իրականացվել են ԱՃԹՆ-ի աշխատանքային ծրագրով հաստատված միջոցառումները, որոնք բարձր են գնահատվել նաև ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության պատասխանատուների կողմից:

Նշվեց նաև, որ ԱՃԹՆ-ի ներդրման աշխատանքների տեսանկյունից 2019 թվականը պատասխանատու տարի է, քանի որ պետք է ապահովենք մի շարք կարևոր արդյունքներ, մասնավորապես ՀՀ ԱՃԹՆ-ի երկրորդ զեկույցի պատրաստման աշխատանքները, ՀՀ ԱՃԹՆ-ի առաջին զեկույցի արդյունքում ի հայտ եկած խնդիրների լուծման և ոլորտի բարեփոխման ուղղությամբ քայլերի ձեռնարկումը, ԱՃԹՆ-ի միջոցով բացահայտված տվյալների վերաբերյալ հանրության իրազեկվածության մակարդակի բարձրացումը, միջազգային անկախ վավերացնողների կողմից Հայաստանի ԱՃԹՆ-ի վավերացման գործընթացի անցկացումը, իրական սեփականատերերի բացահայտումն ապահովող միջոցառումները, 2020 թվականի և հաջորդ տարիների զեկույցներում ԱՃԹՆ-ի շրջանակի ընդլայնման նպատակով նախնական ուսումնասիրության իրականացումը և ոլորտի տվյալների համակարգային բացահայտման թեմայով ուսումնասիրության իրականացումը:

Նիստը նախագահողը տեղեկացրեց, որ համաձայն ԱՃԹՆ-ի աշխատակարգի 2019 թվականի նոյեմբերին լրանում է բազմաշահառու խմբի անդամների մեծ մասի՝ խմբին անդամակցելու 3 տարին, որը ենթադրում է լայն խմբակցությունների՝ քաղաքացիական հասարակության և հանքարդյունահանող կազմակերպությունների կողմից բազմաշահառու խմբի անդամների անկախ ընթացակարգով նոր ընտրությունների անցկացում և կարևորեց ընտրություններին ամենալայն և ներառական մասնակցության ապահովումը բոլոր հետաքրքրվածների համար:

Տ.Ավինյանը նշեց, որ գնահատում է Հայաստանում ԱՃԹՆ-ի ներդրման գործընթացում միջազգային գործընկերների հետ համագործակցությունը, որոնց աջակցության շնորհիվ գրանցվել են նախորդ տարիների արդյունքները և կիրականացվեն վերոնշյալ միջոցառումները և ներկայացրեց, որ 2019 թվականի ԱՃԹՆ-ի աշխատանքային ծրագրի միջոցառումների իրականացման գործում մեր հիմնական գործընկերներն են Համաշխարհային բանկը և Գերմանիայի կառավարության անունից գործող GIZ ընկերությունը:

Օրակարգային հարցերը

1. ՀՀ ԱՃԹՆ-ի ներդրման աշխատանքների 2018 թվականի 4-րդ եռամսյակի հաշվետվության հաստատում ԲՇԽ-ի կողմից

ՀՀ ԱՃԹՆ-ի ներդրման աշխատանքների 2018 թվականի 4-րդ եռամսյակի հաշվետվությունը ներկայացվեց ԲՇԽ-ի հաստատմանը և տեղեկացվեց, որ վերջինիս շուրջ գրավոր մեկնաբանություններ, առաջարկություններ չեն ստացվել ԲՇԽ-ի կողմից:

Բազմաշահառու խումբն ընդհանուր համաձայնությամբ (կոնսենսուսով) **հաստատեց** ՀՀ ԱՃԹՆ-ի ներդրման աշխատանքների 2018 թվականի 4-րդ եռամսյակի հաշվետվությունը:

2. ՀՀ ԱՃԹՆ-ի 2018 թվականի աշխատանքային ծրագրի կատարողականի հաստատում ԲՇԽ-ի կողմից

ՀՀ ԱՃԹՆ-ի 2018 թվականի աշխատանքային ծրագրի կատարողականը ներկայացվեց ԲՇԽ-ի հաստատմանը և տեղեկացվեց, որ վերջինիս շուրջ գրավոր մեկնաբանություններ, առաջարկություններ չեն ստացվել ԲՇԽ-ի կողմից:

Բազմաշահառու խումբն ընդհանուր համաձայնությամբ (կոնսենսուսով) **հաստատեց** ՀՀ ԱՃԹՆ-ի 2018 թվականի աշխատանքային ծրագրի կատարողականը:

3. ՀՀ ԱՃԹՆ-ի 2019թ. ԱՃԹՆ-ի ազգային զեկույցի կազմման տեխնիկական առաջադրանքի ներկայացում և հաստատում ԲՇԽ-ի կողմից

Բազմաշահառու խումբը փաստեց, որ Հայաստանի երկրորդ ԱՃԹՆ-ի զեկույցի կազմման համար նախնական ուսումնասիրություն չի իրականացվել և զեկույցի համար որպես նախնական ուսումնասիրություն կարող են ծառայել 2017թ. իրականացված նախնական ուսումնասիրությունն ու Հայաստանի առաջին ԱՃԹՆ-ի զեկույցը: Երկրորդ ԱՃԹՆ-ի զեկույցի շրջանակը սահմանվում է **ԲՇԽ-ի հետևյալ որոշումներով:**

1. ԱՃԹՆ-ի 2-րդ ազգային զեկույցը կկազմվի **2018 ֆինանսական տարվա** համար:

2. **ԱՃԹՆ-ի 2-րդ զեկույցի համար հրապարակային հաշվետվություն ներկայացնող ընկերությունները և պետական մարմինները**

ԱՃԹՆ-ի հաշվետվություններ ներկայացնեն մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվություն ստացած բոլոր ընդերքօգտագործողները՝ բացառությամբ սնանկ ճանաչվածների:

2018 թվականին համար հաշվետու ընդերքօգտագործող ընկերություններն են.

	Ընդերքօգտագործող	Ընդերքօգտագործման պայմանագրի համարը, տարեթիվը
1.	«Մեղրաձոր գոլդ» ՍՊԸ	Թիվ ՊՎ-057,2012թ. օգոստոսի 22
2.	«Պարամաունտ Գոլդ Մայնինգ» ՓԲԸ	Թիվ 089,2012թ. հունիսի 12
3.	«Սագամար» ՓԲԸ	Թիվ ՊՎ-093,2012թ. հոկտեմբերի 20
4.	«Լեռ-Էքս» ՍՊԸ	Թիվ ՊՎ-094,2012թ. օգոստոսի 16
5.	«Ախթալայի Լեռնահարստացման Կոմբինատ» ՓԲԸ	Թիվ ՊՎ-103,2012թ. հոկտեմբերի 20
6.	«Ֆորչն Ռիզորսիս» ՍՊԸ	Թիվ ՊՎ-169,2012թ. հոկտեմբերի 20
7.	«Մոլիբդենի Աշխարհ» ՍՊԸ	Թիվ ՊՎ-174,2012թ. նոյեմբերի 7
8.	«Կապանի Լեռնահարստացման Կոմբինատ» ՓԲԸ	Թիվ ՊՎ-183,2012թ. նոյեմբերի 27
9.	«Մեգո Գոլդ» ՍՊԸ	Թիվ ՊՎ-184,2012թ. դեկտեմբերի 28
10.	«ԳեոՊրո Մայնինգ Գոլդ» ՍՊԸ	Թիվ ՊՎ-189,2012թ. հոկտեմբերի 20
11.	«Վարդանի զարթոնքը» ՍՊԸ	Թիվ ՊՎ-239,2012թ. սեպտեմբերի 27
12.	«Լիդիան Արմենիա» ՓԲԸ	Թիվ ՊՎ-245,2012թ. սեպտեմբերի 26
13.	«Լիճքվազ» ՓԲԸ	Թիվ ՊՎ-293,2012թ. նոյեմբերի 22
14.	«Ագարակի ՊՄԿ» ՓԲԸ	Թիվ ՊՎ-311,2013թ. ապրիլի 5
15.	«Ասսաթ» ՍՊԸ	Թիվ ՊՎ-366,2013թ. հունիսի 6
16.	«Վայք Գոլդ» ՍՊԸ	Թիվ Պ-371,2012թ. նոյեմբերի 30
17.	«Թեղուտ» ՓԲԸ	Թիվ ՊՎ-376,2013թ. փետրվարի 20
18.	«Մարջան Մայնինգ Քոմփանի» ՍՊԸ	Թիվ ՊՎ-398,2013թ. մարտի 7
19.	«Թաթսթոուն» ՍՊԸ	Թիվ Պ-458,2013թ. փետրվարի 11
20.		Թիվ Պ-459,2013թ. փետրվարի 11
21.	«ԱՏ Մետալս» ՍՊԸ	Թիվ Պ-514,2015թ. հունվարի 16
22.	«Բակտեկ Էկո» ՍՊԸ	Թիվ Պ-515,2014թ. օգոստոսի 22
23.	«Գեղի Գօլդ» ՍՊԸ	Թիվ Պ-544,2016թ. հուլիսի 22
24.	«Մուլտի Գրուպ» Կոնցեռն ՍՊԸ	Թիվ ՊՎ-213,2012թ. հոկտեմբերի 20
25.	«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	Թիվ ՊՎ-232,2012թ. նոյեմբերի 27
26.	«Ակտիվ լեռնագործ» ՍՊԸ	Թիվ ՊՎ-425,2012թ. դեկտեմբերի 28
27.	«Ղարագուլյաններ» ՓԲԸ	Թիվ Պ-547,2016թ. հոկտեմբերի 25

ԱՃԹՆ-ին հաշվետու պետական մարմիններն են՝

- Պետական եկամուտների կոմիտեն,
- ՀՀ բնապահպանության նախարարությունը

  Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Բնապահպանության նախարարությունը չի տիրապետում տույժերի և տուգանքների վերաբերյալ տեղեկատվությանը՝ որոշվեց, որ փոխվարչապետի հանձնարարականով Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը սահմանված ձևաչափով կներկայացնի հաշվետու տարում տույժերի և տուգանքների մասին բոլոր ընդերքօգտագործողների վերաբերյալ տվյալները Բնապահպանության նախարարությանը ԱՃԹՆ-ի 2-րդ զեկույցի հրապարակային հաշվետվություններում ներկայացնելու նպատակով:

- համայնքները՝ որոնց հաշվետվությունների տվյալները ԱՃԹՆ-ի առցանց հաշվետվությունների համակարգում համակարգում կմուտքագրվեն ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության միջոցով:

3. Հաշվետվությունների ներկայացումը

ԱՃԹՆ-ի հրապարակային հաշվետվությունները կներկայացվեն ԱՃԹՆ-ի առցանց հաշվետվությունների հարթակի միջոցով: Ընդերքօգտագործողները և պետական մարմինները 2019 թվականի հրապարակային հաշվետվությունները պետք է ներկակացնեն ոչ ուշ, քան մինչև օգոստոսի 1-ը: Սույնն ապահովելու համար անհրաժեշտություն է առաջանում փոփոխություն կատարել ՀՀ կառավարության 2018 թվականի հունիսի 8-ի N 666-Ն որոշման մեջ:

4. Համադրվող ընկերությունները

Բազմաշահառու խմբի որոշմամբ 2018 ֆինանսական տարվա համար համադրվող են համարվում այն ընկերությունները, որոնք հաշվետու ֆինանսական տարում ՀՀ պետական բյուջե են վճարել 150 միլիոն դրամին համարժեք կամ դրանից բարձր հարկեր և վճարումներ: Որոշման համար հիմք են հանդիսացել 2016-2017 ֆինանսական տարիների բացահայտված տվյալները:

5. ԱՃԹՆ-ի զեկույցում/հաշվետվություններում ներկայացվող հարկերը և եկամուտները

Հետևյալ հարկերն ու վճարումները երկկողմանի կներառվեն (առանց շեմերի) ընդերքօգտագործողների և պետական մարմինների համապատասխան հաշվետվություններում.

1. շահութահարկ
2. եկամտային հարկ
3. ավելացված արժեքի հարկ
4. ակցիզային հարկ
5. ռոյալթի
6. բնօգտագործման վճարներ
7. բնապահպանական հարկ
8. մաքսային տուրքեր և վճարներ (նաև ճանապարհային հարկ)
9. ազնիվ, սև, գունավոր և հազվագյուտ մետաղների յուրաքանչյուր հանքավայրի օգտագործման (շահագործման) թույլտվության տրամադրման համար պետական տուրք
10. ջրօգտագործման թույլտվության տրամադրման պետական տուրք
11. շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի համալրում
12. շրջակա միջավայրի պահպանության դրամագլխից հատկացումներ ընկերությանը
13. մշտադիտարկումների իրականացման վճարներ
14. շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության իրականացման վճար
15. հողի հարկ
16. գույքահարկ
17. հողի ձեռքբերում
18. հողամասերի կադաստրային արժեքների՝ նպատակային նշանակության փոփոխման պահին առկա տարբերության վճարում
19. ՏԻՄ-ին (համայնքին) վճարված վարձակալության վճար
20. տույժեր (նաև տեղական)
21. տուգանքներ (նաև տեղական)
22. Հանքարդյունահանման պայմանագրով սահմանված՝ համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման հետ կապված պարտավորությունները

Միայն ընկերությունների կողմից՝ միակողմանիորեն տրամադրվող ֆինանսական հոսքերն են՝

1. Ընդերքօգտագործողի կողմից համայնքին կատարված բարեգործական հատկացումներ, նվիրատվություններ կամ այլ ձևով համայնքին կատարված անհատույց օտարումները
2. ոչ առևտրային իրավաբանական անձանց տրամադրված նվիրատվություններ, նվիրաբերություններ կամ այլ ձևով կատարված անհատույց օտարումները (ըստ կազմակերպությունների)
3. Ֆիզիկական անձանց տրամադրված նվիրատվություններ, նվիրաբերություններ կամ այլ ձևով կատարված անհատույց օտարումները (ընդհանուր գումարը և ֆիզիկական անձանց թիվը):

Միայն պետության կողմից՝ միակողմանիորեն բացահայտվող էական եկամտային հոսքեր առկա չեն:

Անկախ ադմինիստրատորը համադրելու է հարկային հաշվարկով (հաշվեգրման մեթոդով) ներկայացված տվյալները:

6. Հոսքերի կշիռներ. ֆինանսական հոսքերի համադրման համար էականության բանաձև

Էական կհամարվեն և կհամադրվեն այն եկամտային հոսքերը, որոնց մասնաբաժինը արդյունահանվող ճյուղերից ստացվող եկամտային ընդհանուր հոսքերում կազմում է 1% և ավելի:

7. Համադրման դեպքում թույլատրելի/ոչ էական շեղման սահմանաչափ

Ֆինանսական հոսքի անհամապատասխանությունն անկախ ադմինիստրատորի կողմից վերջնական համադրման նպատակով կհետաքննվի, եթե երկկողմանի ներկայացված ֆինանսական հոսքերում անհամապատասխանության չափը կազմում է ֆինանսական տվյալի 4 տոկոսը, սակայն ոչ պակաս քան 1 միլիոն ՀՀ դրամը: Տվյալ հաշվարկի հիմք է հանդիսանում այն կողմի ներկայացրած տվյալը, որն ավելի փոքր է:

8. ՀՀ ԱՃԹՆ-ի զեկույցի շրջանակում ոչ կիրառելի ֆինանսական հոսքեր

Հիմք ընդունելով Հայաստանի ԱՃԹՆ-ի ազգային զեկույցի բացահայտումները, 2017 թվականին իրականացված նախնական ուսումնասիրությունը և այլ վերլուծություններ ու քննարկումներ՝ ԲՇԽ-ն որոշեց, որ ՀՀ ԱՃԹՆ-ի զեկույցի շրջանակում ոչ կիրառելի ԱՃԹՆ-ի ստանդարտի պահանջներն ու ֆինանսական հոսքերն են՝

1. Հայաստանի մետաղական հանքարդյուբերության ոլորտում գործող պետական կամ պետական բաժնեմասով կազմակերություններ առկա չեն, հետևաբար, պետության և պետական կազմակերպությունների (ՊԿ) միջև գործող ֆինանսական հարաբերություններին առնչվող կանոններին ու պրակտիկային առնչվող ԱՃԹՆ-ի ստանդարտի պահանջները (2.6.ա) Հայաստանում կիրառելի չեն: Դրանք են՝ ՊԿ-ների միջև ֆինանսական փոխանցումները, չբաշխված շահույթը, վերաներդրումը և երրորդ կողմի ֆինանսավորումը, շահաբաժինները, դուստր ձեռնարկություններում և համատեղ ձեռնարկություններում, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանում ընկերություններում սեփականության աստիճանի փոփոխությունները, ՊԿ-ների վճարումները կառավարությանը, և ՊԿ-ների կողմից հավաքագրված էական եկամուտներ կառավարության անունից:

2. Ոլորտից բնաիրային եկամուտները,

3. քվազի-ֆիսկալ ծախսերը, ենթակառուցվածքներին վերաբերող դրույթները և ապրանքափոխանակության կարգավորումները (4.3)

4. փոխադրումներից ստացվող էական եկամուտները (4.4)

5. արտիզանային (artisanal) և փոքրամասշտաբ հանքարդյունահանումը:

ԱՃԹՆ-ի 2016-2017 թվականների զեկույցում նշվել է, որ «Հայաստանում մետաղական հանքարդյունաբերության ոլորտում բացակայում է արտիզանային և փոքրամասշտաբ արդյունահանումը: Քանի որ Հայաստանում չկան հանրությանը հասանելի արժանահավատ գնահատականներ երկրի հանքարդյունաբերությունում առկա ոչ ֆորմալ ոլորտի վերաբերյալ, սույն գործունեության վերլուծության նպատակով ուսումնասիրվել են ոչ ֆորմալ գործունեությանը վերաբերող հասանելի համապատասխան դատական ակտերը և վարչական մարմինների որոշումները: Ուսումնասիրության արդյունքում, հանքարդյունաբերության ոլորտում ոչ ֆորմալ գործունեությանը վերաբերող դատական գործեր չեն բացահայտվել: Հաշվի առնելով ոլորտի առանձնահատկությունները, ներառյալ դրա մասշտաբը, օրենսդրական կարգավորումները, վերահսկողությունը և հաշվետվողականության պահանջները՝ ակնկալվում է, որ այս ոլորտում ոչ ֆորմալ գործունեություն չկա»:

9. Սոցիալ-տնտեսական պարտավորությունները

ԱՃԹՆ-ի զեկույցում կընդգրկվեն հանքարդյունահանման պայմանագրով սահմանված համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման հետ կապված պարտավորությունները, կամավոր սոցիալական ներդրումը համայնքներում, վճարումները ոչ առևտրային իրավաբանական և ֆիզիկական անձանց:

10.Եկամուտների վերաբաշխումը

Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգը հնարավորություն չի ընձեռում իրականացնել հանքարդյունաբերությունից ստացված եկամուտների բաշխման ներկայացում: Սակայն զեկույցում կներկայացվեն «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի համաձայն 2018թ. ընթացքում ազդակիր համայնքներին հատկացված սուբվենցիաները և համապատասխան բնապահպանական նպատակային ծրագրերը:

11. Տվյալների ապաագրեգացման աստիճանը (project-level reporting):

ԲՇԽ-ն որպես ծրագիր է դիտարկում 1 ընդերքօգտագործման իրավունքով/թույլտվությամբ իրականացվող գործունեությունը: Զեկույցում 2018 թվականի համար այն բոլոր ֆինանսական հոսքերը, որոնք հնարավոր է ներկայացնել արդյունահանման թույլտվությունների մակարդակով, պետք է ներկայացվեն հենց այդ մակարդակում, հստակ նշում կատարելով դրա մասին:

12. Արտադրություն, արտահանում և զբաղվածություն

Հանքարդյունահանող ընկերությունները կտրամադրեն ըստ արտադրատեսակների **արտադրության, ներքին իրացման ու արտահանման** տվյալները: Արտադրատեսակները կներկայացվեն ըստ ԵԱՏՄ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի (այսուհետ՝ ԱՏԳ ԱԱ) ծածկագրերի:

Հաշվի առնելով Ընդերքի օրենսգրքի 9-րդ հոդվածի 3-րդ կետի 1-ին ենթակետի պահանջը՝ ընդերքօգտագործողի կողմից ներկայացվող հրապարակային հաշվետվության ձևաչափում կլրացվի ընդերքօգտագործողի կողմից հաշվետու տարում **արդյունահանման** տարեկան ծավալների վերաբերյալ տվյալների ներկայացման պահանջ:

Արտահանման վերաբերյալ տվյալներ կներկայացնի նաև Պետական եկամուտների կոմիտեն: ՀՀ կառավարության 2018 թվականի հունիսի 8-ի N 666-Ն որոշման մեջ պետք է հստակեցնել արտահանման տվյալների ներկայացման, մասնավորապես ծավալների, չափման միավորների և արժեքի ներկայացման մեթոդները ընդերքօգտագործողի և Պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացվող տվյալներում տեխնիկական անհամապատասխանություններից խուսափելու համար:

ԲՇԽ-ն որոշեց, որ 2018 թվականի համար ընդերքօգտագործող կազմակերպությունների կներկայացվեն արտադրված և արտահանված

արտադրատեսակներում (խտանյութ, համաձուլվածք) **մետաղի (մետաղների) տարեկան միջին պարունակության տվյալները**: Այս պահանջի պատշաճ ձևակերպման, տվյալի ներկայացման մեթոդի սահմանման նպատակով քննարկում կիրականացվի ընդերքօգտագործողների և Պետական եկամուտների կոմիտեի համապատասխան մասնագետների հետ:

Ընկերությունները **զբաղվածության** վերաբերյալ տվյալները կներկայացնեն ըստ հետևյալ կատեգորիաների՝

- ✓ աշխատանքային պայմանագրի ժամկետայնության
- ✓ աշխատողների քաղաքացիության՝ ՀՀ քաղաքացի և օտարերկրյա քաղաքացի,
- ✓ աշխատողների համայնքային ներկայացվածության,
- ✓ Զբաղվածության կին-տղամարդ բաշխվածության, ինչպես ներկայացվել է 2016-2017 թվականների զեկույցում: Հայաստանի ԱՃԹՆ-ն 2018 ֆինանսական տարվա զեկույցում կներկայացվի ԱՃԹՆ-ի ստանդարտի սպասվող փոփոխություններով սահմանվող պահանջը՝ բացի գենդերային բաշխվածությունից կներկայացվի նաև զբաղվածության տեսակը՝ կառավարչական գործառույթներ կատարող և այլ աշխատանք կատարող:

13.Տվյալների հուսալիություն և հավաստիության հաստատում

ԲՇԽ-ն **որոշեց**՝ հաշվետվություններում ներկայացվող տվյալների հուսալիությունն ու ճշգրտությունն հավաստիացնելու նպատակով հաշվետվությունները պետք է վավերացվեն ընկերության ղեկավարի կամ գլխավոր հաշվապահի և պետական մարմնի բարձրաստիճան պաշտոնյայի կամ իր տեղակալի էլեկտրոնային ստորագրությամբ:

Հաշվետվությունները ստորագրողներ են հանդիսանում՝

1) պետական կառավարման մարմինների ղեկավարները և (կամ) տեղակալը,

2) մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվություն ստացած ընդերքօգտագործող ընկերության ղեկավարը կամ գլխավոր հաշվապահը:

14.Ներկայացնող տվյալների աուդիտը

ԲՇԽ-ն փաստեց, որ, համաձայն ՀՀ օրենսդրության նախարարություններում ներքին աուդիտի համակարգը գործում է նախարարի, ՀՀ կառավարության ենթակա պետական կառավարման այլ մարմիններում՝ մարմնի ղեկավարի, ՀՀ համայնքներում՝ համայնքի ղեկավարի, իսկ ՀՀ օրենքների հիման վրա

ստեղծված այլ պետական մարմիններում՝ տվյալ մարմնի ղեկավարի ենթակայությամբ:

Ընդերքօգտագործողները հաշվետվություններում պետք է ներկայացնեն տեղեկատվություն հաշվետու տարվա համար աուդիտի իրականացման վերաբերյալ և տրամադրեն աուդիտորական եզրակացության հրապարակման հղումը (կամ կցեն տպագիր հրապարակված աուդիտորական եզրակացության լուսաձրված տարբերակը):

Համաձայն ԱՃԹՆ-ի առաջին զեկուցի՝ 2016-2017թթ. 27 մետաղական հանքաքար արդյունահանող ընկերություններից 7 մեծ ընկերությունները («Ագարակի ՊՄԿ» ՓԲԸ, «Գեղի Գօլդ» ՍՊԸ, «Գեոպրոմայնինգ Գոլդ» ՍՊԸ, «Զանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ, «Թեղուտ» ՓԲԸ, «Լեռ-Էքս» ՍՊԸ, «Լիդիան Արմենիա» ՓԲԸ) անցել են աուդիտ:

15. Ընդերքի հետախուզման կարևոր ծրագրերի նկարագրությունը

Զեկույցում պետք է ներկայացվի հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում ընդերքի հետախուզման կարևոր ծրագրերի նկարագրությունը, ինչպես նաև հաշվետու տարվա ընթացքում երկրում հաստատված պաշարների ագրեգացված մեծությունը՝ ըստ հանքատեսակների: Պետք է ներկայացվի նաև տեղեկատվություն, թե հետախուզման աշխատանքները որ փուլում են գտնվում, ինչպես նաև այդ աշխատանքների իրականացման տարածաշրջանները:

16. 2019 թվականի ԱՃԹՆ-ի զեկույցի շրջանակի ընդլայնում՝ զեկույցում ներառվող նոր տեղեկատվություն

- Անկախ ադմինիստրատորը պետք է նկարագրի ոլորտում իրավասություն ունեցող պետական և համայնքային մարմիններն ու վերջիններիս լիազորությունները և ներկայացնի փորձագիտական վերլուծություն լիազորությունների իրականացման համար առկա կարողությունների վերաբերյալ:
- Անկախ ադմինիստրատորը պետք է վերլուծի և ներկայացնի մետաղական հանքարդյունաբերության ոլորտի բազմակողմանի ազդեցությունը հիմնական ազդակիր համայնքների տնտեսության և տնտեսական ակտիվության ցուցանիշի վրա:
- Անկախ ադմինիստրատորը պետք է ներկայացնի օգտակար հանածո պարունակող հողամասերի հասանելիությունը, հողօգտագործման իրավունքի ձեռքբերման և ջրօգտագործման թույլտվության տրամադրման գործընթացների մանրամասն նկարագրությունը՝ ներառելով պատասխանատու պետական գերատեսչությունները, նրանց իրավասությունները, ժամկետները և բոլոր

պահանջվող փաստաթղթերը, ինչպես նաև ներկայացնի գնահատական, թե այս գործընթացներն ինչ ազդեցություն ունեն ընդերքօգտագործման իրավունքի փաստացի իրացման գործընթացի ու ժամկետների վրա, վեր հանի առկա օրենդրական բացերն ու խոչընդոտները, ինչպես նաև փաստացի դեպքերը և ներկայացնի դրանց վերացման վերաբերյալ առաջարկություններ: Մասնավորապես, անկախ ադմինիստրատորը պետք է ուսումնասիրվի միջազգային լավագույն փորձը հողօգտագործման իրավունքի տրամադրման և ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման գործընթացների զուգակցման հարցում, որի հիման վրա ներկայացնի առաջարկներ:

- Անկախ ադմինիստրատորը պետք է նկարագրի ընդերքօգտագործման իրավունք ունեցող կազմակերպությունների բաժնետոմսերի վաճառքը կարգավորող իրավական կարգավորումները, ներկայացնի բաժնետոմսերի վաճառքի արդյունքում ընկերության փաստացի սեփականատիրոջ փոփոխության հետ կապված խնդիրները, իրականացնի համեմատական իրավական վերլուծություն լիազոր մարմնի համաձայնությամբ ընդերքօգտագործման իրավունքի փոխանցման ընթացակարգի հետ, վեր հանի իրավական բացերը և ներկայացնի դրանց լրացման հստակ առաջարկություններ:
- Անկախ ադմինիստրատորը պետք է ուսումնասիրի և ներկայացնի արդյունահանման բնապահպանական ազդեցության կառավարման և մոնիթորինգի վերաբերյալ առկա տեղեկատվությունը, մասնավորապես, զեկույցում պետք է ներկայացվի հաշվետու տարվա համար ՀՀ բնապահպանության նախարարության կայքում հրապարակվող մթնոլորտային օդի, մակերևութային և ստորերկրյա ջրերի, մթնոլորտային տեղումների, հողերի, հատակային նստվածքների որակի մոնիթորինգ և գնահատման վերաբերյալ հակիճ տեղեկատվություն, որն առնչվում է հաշվետու ընդերքօգտագործողների գործունեության հետ: Այս առաջադրանքը հասցեագրում է ԱՃԹՆ-ի ստանդարտի նոր պահանջին, որը պետք է հաստատվի 2019 թվականի հունիսին:
- Զեկույցը կազմելիս՝ Անկախ ադմինիստրատորը պետք է հարցում ուղարկի ընդերքօգտագործող ընկերություններին՝ ընկերության՝ ԲՇԽ-ի կողմից սահմանված իրական սեփականատերերի սահմանմանը համապատասխան իրական սեփականատերերի կամավոր կերպով բացահայտման խնդրանքով: Ստացված տեղեկատվությունը պետք է ներառվի զեկույցում:

Ներկայացվեց, որ համաձայն ԲՇԽ-ի որոշումների կազմվել է անկախ ադմինիստրատորի տեխնիկական առաջադրանքի (ՏԱ) նախագիծը ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության կողմից մշակված նմուշի վրա: ՏԱ-ն նախապես ներկայացվել է ԲՇԽ-ի անդամներին, ինչպես նաև ԱՃԹՆ-ի միջազգային

քարտուղարությանը, որից ստացվել են առաջարկություններ և նկատառումներ և կատարվել է ՏԱ նախագծի լրամշակում: ԱՃԹՆ-ի զեկույցի կազմման աշխատանքները իրականացվելու են մի քանի փուլերով՝ (փուլ 1) նախնական վերլուծություն և մեկնարկային հաշվետվություն, (փուլ 2) տվյալների հավաքագրում, (փուլ 3) տվյալների նախնական համադրում, (փուլ 4) անհամապատասխանությունների քննում և ԱՃԹՆ-ի զեկույցի նախագիծ, (փուլ 5) ԱՃԹՆ-ի վերջնական զեկույց: ԱՃԹՆ-ի զեկույցը և նախագծերը պետք է տրամադրվեն հայերեն և անգլերեն լեզուներով, ինչպես նաև անկախ ադմինիստրատորը պետք է իրականացնի զեկույցի տպագրությունը և զեկույցի հանրամատչելի տարբերակի ներկայացումը, ինչպես նաև ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարությանը ներկայացնի սահմանված ձևաչափով ամփոփ տվյալների տեղեկանքը:

Անկախ ադմինիստրատորին ներկայացվող պահանջները նույնպես ներկայացվել են տեխնիկական առաջադրանքում: Անկախ ադմինիստրատորի ընտրության մրցութային հանձնաժողովում պետք է ընդգրկվեն 1-ական ներկայացուցիչ ԲՇԽ-ի յուրաքանչյուր խմբակցությունից: ԲՇԽ-ի խմբակցությունները համաձայնեցին ներկայացնել հանձնաժողովի անդամի համապատասխան խմբակցությունների թեկնածուներին նիստից հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում:

ԲՇԽ-ն ընդհանուր համաձայնությամբ **որոշեց** հաստատել անկախ ադմինիստրատորի տեխնիկական առաջադրանքը, իսկ դրանում փոփոխություն կատարելու դեպքում արագացված ընթացակարգով քննակել և ընդունել փոփոխությունները:

Տեղեկացվեց, որ 2018 ֆինանսական տարվա հրապարակային հաշվետվությունների ներկայացումը ապահովելու համար պետք է փոփոխություններ կատարել կատարել ՀՀ կառավարության 2018 թվականի հունիսի 8-ի N 666-Ն որոշման մեջ, որում կարտացոլվեն ՀՀ հարկային օրենսգրքի փոփոխությունները, ԱՃԹՆ-ի 1-ին ազգային զեկույցում ներկայացված առաջարկությունները և ԲՇԽ-ի՝ ԱՃԹՆ-ի 2-րդ զեկույցի շրջանակին վերաբերող որոշումները: Հաշվետվությունների ձևաչափերը կհամաձայնեցվեն զեկույցը կազմող անկախ ադմինիստրատորի հետ, ինչպես նաև կներկայացվեն ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության կարծիքին, այնուհետև կներկայացվեն ԲՇԽ-ի հաստատմանը: Հաշվետվությունների ձևաչափերում կատարված փոփոխությունների և լրացումների հետ կապված՝ փոփոխություններ պետք է կատարվեն նաև ԱՃԹՆ-ի առցանց հաշվետվությունների ներկայացման հարթակում, հաշվետվությունների առցանց ներկայացման գործընթացի անխափանությունն ապահովելու համար:

3. 2020թ. ԱՃԹՆ-ի շրջանակի ընդլայնման նախնական ուսումնասիրության տեխնիկական առաջադրանքի շրջանակի սահմանման հարցերի ներկայացում և քննարկում

Ներկայացվեցին 2020թ. ԱՃԹՆ-ի շրջանակի ընդլայնման նախնական ուսումնասիրության տեխնիկական առաջադրանքի շրջանակի սահմանման հարցերը:

Առաջարկվեց 2020թ. ԱՃԹՆ-ի զեկույցի համար հաշվետու դարձնել Հայաստանի Հանրապետությունում մետաղական հանքաքարի և խտանյութի վերամշակմամբ զբաղվող կազմակերպությունները (այսուհետև՝ ձուլարաններ) և համապատասխան տեղեկատվությանը տիրապետող պետական մարմինները: Ներկայացվեց, որ ուսումնասիրության շրջանակում ուսումնասիրություն կատարողի կողմից ակնկալվում է ուսումնասիրել ձուլարանների գործունեության օրենսդրական կարգավորումները, ներկայացնել մետաղական հանքարդյունաբերության ոլորտում գործունեություն իրականացնող ձուլարաններին ըստ գործունեության տեսակների տարանջատելու եղանակի վերաբերյալ առաջարկություն, ներկայացնել օրենսդրական փոփոխությունների առաջարկություն ԲՇԽ-ի որոշումների և ԱՃԹՆ-ի ստանդարտի համապատասխան ձուլարանները ԱՃԹՆ-ի շրջանակում հաշվետու դարձնելու նպատակով:

Առաջարկվեց նախնական ուսումնասիրության շրջանակում իրականացնել հանքային ջրեր արդյունահանող տնտեսվարող սուբյեկտներին ԱՃԹՆ-ի շրջանակում հաշվետու դարձնելու նպատակահարմարության ուսումնասիրություն, որի արդյունքում ուսումնասիրություն կատարողը կներկայացնի հանքային ջրերի արդյունահանման թույլտվություն ունեցող կազմակերպությունների գործունեության, ՀՀ տնտեսության մեջ ոլորտի մասնաբաժնի, ոլորտը կարգավորող ինստիտուցիոնալ և ֆիսկալ ռեժիմների, ոլորտից պետության (պետական և համայնքային բյուջեներ ստացվող) եկամուտների (հիմք ընդունելով ԱՃԹՆ-ի ստանդարտի պահանջները) մասին տեղեկատվություն և առաջարկություններ ոլորտի ԱՃԹՆ-ի հաշվետվողականությունն ապահովող օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ:

Նշվեց նաև, որ կատարողի կողմից ակնկալվում է իրականացնել վերլուծություն վերոնշյալ ոլորտներում ԱՃԹՆ-ի ստանդարտի պահանջների կիրառելիության, պետության և ընկերությունների կողմից ներկայացվելիք եկամտային հոսքերը ծրագրի մակարդակով ներկայացնելու հնարավորությունների վերաբերյալ, նախանշել այդ ոլորտներից ստացվող պետական եկամուտների ընդհանուր չափը՝ էականության սահմանումը տալու և

ԱՃԹՆ-ի համապատասխանեցման ծածկույթը փաստաթղթավորելու համար: Այս ուսումնասիրության արդյունքում ԲՇԽ-ն որոշում կկայացնի այդ ոլորտները ԱՃԹՆ-ի հետագա զեկույցներում ընդգրկելու ուղղությամբ:

Առաջակվեց նաև նախնական ուսումնասիրության մեջ ընդգրկել պինդ ոչ մետաղական հանքարդյունաբերության և հանքային ջրերի արդյունահանման ոլորտների ընդերքօգտագործման պայմանագրերի հրապարակման հարցի ուսումնասիրությունը: **Առաջարկվեց** նաև գնահատել պինդ ոչ մետաղական հանքարդյունաբերության ոլորտից ստացվող պետության եկամուտները և դրանք էական լինելու պարագայում առաջարկել էականության շեմ, որի արդյունում ԲՇԽ-ն կունենա տեղեկատվություն ոլորտը ԱՃԹՆ-ի շրջանակում հաշվետու դարձնելու նպատակահարմարության վերաբերյալ:

Ձուլարանները հաշվետու դարձնելու հետ կապված մտահոգություն հայտնվեց, որ ձուլարանների գործունեության բնույթը, կախված պայմանագրային հարաբերություններից, տարբերվում է՝ կարող է վերամշակվել արտասահմանից ներմուծված խտանյութը և արտահանել, կամ հայաստանյան արդյունահանողից ընդունել խտանյութ, վերամշակել և վերադարձնել արդյունահանողին, որի արդյունքում ձուլարանները չեն դառնում այդ խտանյութի կամ արդյունահանված պաշարի սեփականատեր և/կամ դառնում ռոյալթի վճարող: Արդյունքում առկա է խնդիր ձուլարաններին հաշվետու դարձնելու հիմնավորման հետ կապված, քանի որ դրանք ոչ մասնակցում են արդյունահանմանը, ոչ էլ միջամտում են այդ գործընթացներին:

Նշվեց, որ ԱՃԹՆ-ի ստանդարտը հստակ նպատակ ունի ամբողջ շղթայի մասով տեղեկատվություն ներկայացնել, իսկ ձուլարաններին, որպես մետաղական հանքարդյունաբերության շղթայի մաս, նույնպես համարվում են ռոյալթի վճարող տեղական հանքանյութի վերամշակման դեպքում: **Առաջարկվեց** հստակեցնել ձևակերպումը, և այն ձուլարանները դարձնել հաշվետու, որոնք վերամշակում են Հայաստանի Հանրապետության տարածքում արդյունահանված օգտակար հանածոն:

Տեղեկացվեց, որ համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի ռոյալթի վճարողներ են համարվում նաև ընդերքօգտագործման թափոններից և (կամ) հանքաքարից մետաղի խտանյութ և (կամ) ձուլվածք կամ ընդերքօգտագործման թափոնների, հանքաքարի, խտանյութի, ձուլվածքի վերամշակման արդյունքում ցանկացած արտադրանք արտադրող հանդիսացող կազմակերպությունները՝ անկախ մետաղական օգտակար հանածոյի հանքավայր շահագործող հանդիսանալուց:

Առաջարկվեց հանքային ջրերի ոլորտին զուգահեռ ուսումնասիրել նաև ոչ մետաղական հանքարդյունաբերության ոլորտը, ըստ որի ԲՇԽ-ն կորոշի՝

դրանցից որն է ավելի առաջնահերթ ԱՃԹՆ-ի շրջանակում հաշվետու դարձնելու առումով:

Նշվեց, որ ԱՃԹՆ-ի ստանդարտը դնում է էականության պահանջ, և պետք է հասկանալ ոչ մետաղական հանքարդյունաբերության ոլորտից ստացվող պետական եկամուտների ընդհանուր ծավալը և ոլորտի մասնաբաժինը ՀՀ տնտեսության մեջ: Պինդ ոչ մետաղական օգտակար հանածո արդյունահանող տնտեսվարող սուբյեկտների թիվը համադրելիության առումով մեծ է՝ մոտ 400, ինչը խրթին է դարձնում էականության սահմանումը: **Առաջարկվեց** ուսումնասիրել ոչ մետաղական հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ներուժը ՀՀ կառավարության կողմից Համաշխարհային բանկի օժանդակությամբ իրականացվող «Հայաստանի ընդերքի ոլորտի տնտեսական վերլուծությունը և դրա ազդեցությունը կայուն զարգացման վրա» և «Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտի բնապահպանական և առողջապահական գնահատում՝ ոլորտի քաղաքականության մշակմանը նպաստելու նպատակով» ուսումնասիրությունների շրջանակներում:

Տեղեկացվեց նաև, որ հանքային ջրեր արդյունահանող տնտեսվարող սուբյեկտների թիվը մի քանի տասնյակ է և **առաջարկվեց** ԱՃԹՆ-ի նախնական ուսումնասիրության շրջանակներում դիտարկել նաև ստորգետնյա քաղցրահամ ջրերի հարցը:

Նշվեց, որ ԱՃԹՆ-ի շրջանակներում ստորերկրյա քաղցրահամ ջրերի ոլորտն ընդգրկելու հարցի քննարկման անհրաժեշտություն կա և առաջարկվեց ոլորտի նախնական ուսումնասիրության նպատակահարմարությունը քննարկել հետագա տարիներին:

Առաջարկվեց ոչ մետաղական օգտակար հանածոների արդյունահանումը դիտարկելու համար աշխատանքային խմբում շրջանառել և քննարկել այդ ոլորտից և հանքային ջրերի արդյունահանումից պետության եկամուտները՝ էականությունը և նախնական ուսումնասիրության շրջանակում ընդգրկելու նպատակահարմարությունը հասկանալու համար:

Որոշվեց ԱՃԹՆ-ի շրջանակի ընդլայնման նախնական ուսումնասիրության տեխնիկական առաջադրանքի շրջանակում ընդգրկել մետաղաձուլարանները վերապահումով, որ կդիտարկվեն միայն ՀՀ տարածքում արդյունահանված հանքանյութ վերամշակող ձուլարանները, իսկ եթե ձուլարանում վերամշակվում է ներմուծված հանքանյութ, ապա դրանք չեն ներառվի նախնական ուսումնասիրության շրջանակում: Ինչպես նաև նախնական ուսումնասիրությունը կատարողից պահանջել բազմակողմանի ուսումնասիրել ու մասնագիտական կարծիք արտահայտել այն ձուլարանների վերաբերյալ, որոնք վերամշակում են ՀՀ տարածքում արդյունահանված հանքանյութը, բայց չեն

դառնում տվյալ վերամշակվող նյութի սեփականատեր, հետևաբար չեն համարվում ռոյալթի վճարող:

Հանքային և ստորերկրյա քաղցրահամ ջրերի պարագայում նախնական ուսումնասիրությունում դիտարկել միայն հանքային ջրերը, որպեսզի հնարավոր լինի կառավարել այդ ամբողջ ծավալը և ռեսուրսներն արդյունավետ օգտագործել: Իսկ նախքան նախնական ուսումնասիրության տեխնիկական առաջադրանքը ԲՇԽ-ի կողմից հաստատելը՝ հանքային ջրերի և ոչ մետաղական հանքարդյունաբերության ոլորտները նախնական ուսումնասիրության շրջանակում ներառելու վերաբերյալ կազմակերպել ԲՇԽ-ի աշխատանքային քննարկում՝ նախապես Պետական եկամուտների կոմիտեից ստանալով այդ ոլորտներից պետության եկամուտների վերաբերյալ ընդհանրական տվյալներ: Այդ նպատակով Էներգետիկայի և բնական պաշարների նախարարության կողմից ՊԵԿ-ին նախապես կտրամադրվի հանքային ջրերի և պինդ ոչ մետաղական օգտակար հանածոների արդյունահանման թույլտվություն ունեցող տնտեսվարող սուբյեկտների ցանկը, համաձայն որի ՊԵԿ-ը կտրամադրի այդ ոլորտների տնտեսավարող սուբյեկտների կողմից պետության ստացած կոնսոլիդացված եկամուտների մասով տեղեկատվություն:

4. ԱՃԹՆ-ի ներդրման աշխատանքների ներկայացում

Պատասխանատու հանքարդյունաբերության ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի հայեցակարգի մշակման աշխատանքներ. պատասխանատու հանքարդյունաբերության սահմանումը

Ներկայացվեց ԲՇԽ-ի պատասխանատու հանքարդյունաբերության աշխատանքային խմբի կողմից մշակվող՝ ԱՃԹՆ-ի պատասխանատու հանքարդյունաբերության մշակույթի ներդրման հայեցակարգային փաստաթղթում տրվող պատասխանատու հանքարդյունաբերության սահմանումը և շրջանակը՝ ըստ որի՝

«Պատասխանատու հանքարդյունաբերությունը ոլորտի բոլոր շահառուների՝ ընդերքօգտագործողների, պետական կառավարման մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների, ազդակիր համայնքի բնակչության և քաղաքացիական հասարակության պատասխանատու գործելաոճի համակցությունն է: Ընդ որում պատասխանատվությունը բաշխվում է այդ դերակատարների միջև՝ իրենց համապատասխան իրավունքների, լիազորությունների ու պարտավորությունների արդյունավետ կազմակերպման համար պատշաճ մեխանիզմների կատարելագործմամբ:

Պատասխանատու հանքարդյունաբերությունը այնպիսի իրավական նորմերի, ինստիտուտների և գործելաոճի ամբողջություն է, որի միջոցով ապահովվում է ողջամիտ ընդերքօգտագործում՝ հիմնվելով շրջակա միջավայրի պահպանության, հնարավոր ռիսկերի գնահատման, մեղմացման, վնասի

կանխարգելման և հետևանքների վերացման, ԵՄ ստանդարտներով տնտեսական օգուտ-վնաս հարաբերակցության գնահատման, ընդերքօգտագործողների, պետության և բնակչության համար օգուտի ստեղծման ու արդարացի բաշխման և առկա լավագույն տեխնոլոգիաների կիրառման, ազդակիր համայնքների սոցիալ-տնտեսական կյանքում դրական ազդեցություն ունենալու, թափանցիկ և հաշվետու աշխատելու և անվտանգ ու առողջության համար անվնաս աշխատանքային պայմաններ ապահովելու սկզբունքների վրա:

Պատասխանատու հանքարդյունաբերության մշտական ուղենիշը պետք է լինի կայուն զարգացման, տնտեսական արդյունավետության և սերունդների հանդեպ պատասխանատվության համակցումը:»

Առաջարկվեց արդյունավետության տեսանկյունից հստակեցնել տնտեսական օգուտ-վնաս հարաբերակցության գնահատման ստանդարտը՝ չսահմանափակվելով միայն *ԵՄ ստանդարտներով*, այլ փոխարենը սահմանման մեջ ամրագրել *միջազգային լավագույն ստանդարտները*: **Նշվեց**, որ ինչպես ԵՄ ստանդարտներով, այնպես էլ միջազգային լավագույն ստանդարտով տնտեսական օգուտ-վնաս հարաբերակցության գնահատումը նշելով տարընթերցման տեղիք է տրվում, և ենթադրվում է ընտրության հնարավորություն, ինչը կդառնա վիճաբանության առարկա, քանի որ շատ տարբերվող կարող է լինել:

Որոշվեց լրամշակել սահմանումը՝ հանել «ԵՄ ստանդարներով» բառակապակցությունը և հստակեցնելու համար հղում կատարել՝ «տնտեսական օգուտ-վնաս հարաբերակցության գնահատումը կիրականացվի այն ստանդարտով, որը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ կներդրվի որպես կիրառելի չափանիշ»:

Իրական սեփականատերերի բացահայտմանն ուղղված ընթացիկ աշխատանքների ներկայացում

Ներկայացվեց, որ մետաղական հանքարդյունաբերության ոլորտում գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների իրական սեփականատերերի բացահայտումը ապահովող օրենքների նախագծերի փաթեթը ներառված է Ազգային ժողովի ընթացիկ նիստի օրակարգում: Օրենքերի ընդունումից հետո կսկվեն ենթաօրենսդրական ակտերի և իրավաբանական անձանց գրանցման պետական ռեգիստրում համապատասխան ծրագրային ապահովման մշակման աշխատանքները:

Մարզային հանդիպումների կազմակերպում հիմնական ազդակիր համայնքներում ԱՃԹՆ-ի առաջին զեկույցում բացահայտված տեղեկատվության ներկայացման համար

Ներկայացվեց, որ առաջիկա ամսվա ընթացում կազմակերպվելու են հանդիպումներ Հայաստանի մետաղական հանքարդյունաբերության հիմնական ազդակի համայնքներում Հայաստանի ԱՃԹՆ-ի առաջին զեկույցը ներկայացնելու և համայքների բազմաշահառու ներկայացուցիչների հետ քննարկումներ իրականացնելու նպատակով, և կարևորվում է ԲՇԽ-ի բոլոր խմբակցությունների անդամների ակտիվ մասնակցությունը համայնքային հանդիպումներին: